

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ
2014թ. Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Հարգարժան համագյուղացիներ և հյուրեր, այսօր Ձեր քննարկմանն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղապետարանի և ավագանու կողմից 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին - առանձին և վերջում կդրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի բյուջե 2014թվականին հաստատվել են՝
Եկամուտներ ընդամենը՝

h/h	Եկամուտներ	2014թ. հաստատված	2-րդ կիսամյակի կատարողականը	կատարողականը առ. 01.01. 2015թ. o/o
1	Հողի հարկ	4779.6	4782,8	100,1
2	Գույքահարկ	1900.0	1807,7	95,1
3	Վարձակալական հողի հարկ	88.5	75,0	84,7
4	տեղական տուրքեր	180.0	137,5	76,4
5	տեղական վճարներ	-	----	----
6	այլ ոչ հարկային եկամուտ	---	--	---
7	ընդամենը սեփական եկամուտներ	6948,1	6803,0	97,9
8	մնացորդ առ 01.01.2014թ.	20,3	20,3	-----
9	դոտացիա	16297.7	16297,7	100
10	սուբվենցիա	56,4	56,4	100
	Ընդամենը	23302,2	23157,0	99,4

Ընդամենը եկամուտներ 23302,2 հազ. դրամ

2015թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարվել են հետևյալ ծախսերը ըստ բնագավառների

1. Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար

1) աշխատավարձ - 12068,7-ի դիմաց --	12068,7	հազ.դրամ --100 օ/օ
2 խրախուսանք --	600,0	
3. Էլ. ծախսեր -	900,0	
4. կապի ծառայություն -	255,0	
5. գույքի և սարքավորումներ-	420,0	
6 ներկայացուցչական ծախսեր	250,0	
7. ընդհանուր բնույթի այլ ծառ	200,0	
8 համակարգչային ծառայություն -	30,0	
9 գրասենյակային նյութեր -	250,0	
10 ընթացիկ նորոգում -	600,0	
11 տեղեկատվական ծառայութ.	68,0	
12 դրամաշնորհ --	2500,0	
13 վարչական սարքավորումներ -	300,0	
14.նվիրատվություն այլ կազմակեր-	13,5	

ընդամենը 18455,2 հազ.դրամ

2. Շրջակա միջավայր

1.Աղբահանում - 960,0

ընդամենը 960,0 հազ.դրամ

3. Մշակույթ, հանգիստ և կրոն

1 վարչական սարքավորումներ-	844,8
2 երիտասարդական ծրագիր -	1000,0
3 գրադարաններ-	25,0

ընդամենը 1869,8 հազ.դրամ

4 Սոցիալական պաշտպանություն

1. սոց. օգնություն -- 1200,0

ընդամենը 22485,0 հազ.դրամ

ընդամենը ծախսեր՝ 22485,0 հազ.դրամ

2. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

- 3ամայնքի ղեկավարի կողմից ընդունվել է՝ քաղաքացիների ընդունելության օր. որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ:
2015թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքի բնակիչներին տրվել է 372 տեղեկանքներ, 103 գրություններ այլ կազմակերպություններին:
- Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառում

1. Համայնքում պահպանվել է կարգ ու կանոն, մեծ խախտումներ համայնքի բնակիչների կողմից չեն կատարվել
2. Համայնքում կատարված իրավախախտումների մասին ոստիկանության ներկայացուցչի տրված տեղեկատվության համաձայն որոշ անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Աջակցել ենք աշնանային գորակոչին և ուսումնավարժական հավաքներին:
2. Աջակցել ենք Արցախի պատերազմի մասնակիցների և զոհվածների ընտանիքների հանգստի և սոցիալական խնդիրներին:
3. Աջակցել ենք ԶՊ մարմինների գործունեությանը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աջակցել ենք սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Համայնքի գյուղացիական տնտեսությունների համար ձեռք է բերվել պարարտանյութ և դիզ. վառելանյութ:
2. Ցրտահարությունից առավել տուժած բնակիչներին բաշխվել է Արմավիրի մարզպետարանից ստացված սերմացուները:
3. Աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
4. Մաքրվել է համայնքի ոռոգման ցանցի որոշակի տարածքներ:
5. Կազմակերպվել և ժամանակին վիճակագրական վարչություն է ներկայացվել բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի ընթացքի մասին հաշվետվությունները

7. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1. «Զառնաթերփարթ ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության և համայնքի մասնակի ներդրումների շնորհիվ ամբողջովին հիմնանորոգվեց համայնքի մշակույթի տունը և համալրվեց գույքով, համակարգչային տեխնիկայով և աթոռներով: Բարեկարգվեց մշակույթի տան տարածքը, որտեղ տեղադրվեց տաղավար և աղբամաններ
2. Աշխատում է համայնքի բուժ. կետը
3. Մշակույթի տանը հաճախակի կազմակերպվում և անցկացվում են միջոցառումներ:
4. Գործում է գրադարանը, որը համալրված է համապատասխան գրականությամբ:
5. Ակտիվ գործում է թատերական խմբակը, որը հոկտեմբեր ամսին մասնակցելով „Նռան հատիկ“, մանկապատանեկան մրցույթին արժանացավ հուշանվերի և պատվոգրի

8. ԿՈՍՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում չկա առանձնացված տարածք:

- Շրջակա միջավայրը մաքուր պահելու համար ամեն տարի, բյուջեի ձևավորման ժամանակ, հատուկ ուշադրություն է դարձվում աղբաթափման աշխատանքների վրա:
2. Համայնքում շաբաթը 1 անգամ կատարվում է աղբաթափման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում՝ 2 անգամ:
 3. Բարեկարգվել են գյուղամիջյան փողոցները և դաշտամիջյան ճանապարհները ավազահողային ծածկույթով:

Ծիածանի գյուղական համայնքում 2014 թվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

1. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:
2. Ոռոգման ցանցի մասնակի նորոգում:
3. Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում:
4. Գյուղ մտնող կենտրոնական փողոցի 1.5 կմ ասֆալտապատում
5. Գյուղ. մթերքների շուկայական ցածր գները և բերքի իրացման հետ կապված դժվարությունները
6. Գյուղամիջյան և դաշտամիջյան հողային ճանապարհների բարեկարգում հողաավազային ծածկույթով:

Համայնքի ղեկավար՝

Խ. Գևորգյան

Աշխատակազմի քարտուղար՝

Հ. Սանուկյան

